ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 134-Ա

ԱՂՎԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 30-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 15-ի N 1287-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 2-րդ, 4-րդ, 5-րդ, 8-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2022 թվականի դեկտեմբերի 29-ի N 1550-Լ որոշմամբ հաստատված 9-րդ հավելվածի 20-րդ կետը և Աղվան Հարությունյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ.

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի գլխավոր քարտուղար Աղվան Հարությունյանին 2026 թվականի հունիսի 4-ից 9-ը ներառյալ տրամադրել 2025-2026 թվականների աշխատանքային տարվա ամենամյա լրացուցիչ արձակուրդի չօգտագործած 4 աշխատանքային օրը:

2. Աղվան Հարությունյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում գլխավոր քարտուղարի պարտականությունների կատարումը վերապահել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ Սրբուհի Դավթյանին:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությանը՝ կատարել որոշումից բխող Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված գործառույթները:

4. Աղվան Հարությունյանին աշխատանքի մեջ համարել 2026 թվականի հունիսի 10-ից:

2026-05-27 15:00:16 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Վ. ԱՍԼԱՆՅԱՆ

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ
2026թ. մայիսի 27
ք. Եղեգնաձոր